ON THE STATE OF SCIENCE IN ARMENIA AND ITS DEVELOPMENT PROSPECTS

Hrant Arakelian
Doctor of Philosophy,
Leading Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

Currently, the general state of science in Armenia, sometime known for its achievements, is supercritical. The scanty funding in the past three decades has brought the scientific community of Armenia to the verge of, at best, a miserable stagnation in the backyard of world science. According to the available statistics on such an integral indicator as the ratio of the average salary of a scientist to the average salary in the country, Armenia occupies almost the shameful last place in the world. In order to ensure the existence of Armenian science which is also of great benefit to the country's economy, in order to raise its prestige in society, to restrain the drain of the best brains abroad and ensure a wide influx of young personnel, it is necessary, within the framework of competently organized R & D (Research and development), to increase the financing of science by at least 50% per cent over the years. Wherein, the budget burden of spending on science, say, by 2024, will not exceed 5%, which does not go beyond the financial possibilities of the country.

Keywords: science, crisis, development, perspective, financing.

Ս. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ «ՍՐԲԱԶԱՆ ՄԵԿՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲՈՎԱՆԴԱԿ ԱՌԱՐԿԱՅՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Ռոմիկ Քոչարյան
Փիլիսոփայության գիտությունների թեկնածու, դոցենտ,
«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվ. գիտահետազոտական
ինստիտուտի ավագ գիտաշխատող

1. Հերմենևտիկան մարդկության գիտամշակույթի ու արվեստամշակույթի կայացմանը ներհյուսված՝ քննա-խորհրդածությամբ իրեն ինքնահասկացող ու լրումի բերող ամենայն իր տեսությունների,

պատմության ու կիրառության հայեցակարգերով առհայտ է որպես հասկացման ու մեկնության տեսա-գործնական գիտակարգ: Ավանդական հերմենևտիկայի հայեցակարգերի առնչությամբ ամենքին է հայտիմաց առավելաչափ ***կիրառական*** գործառույթը և անտիկ շրջանում տարաբնույթ՝ կրոնական, գրական ու գիտական տեքստերի, իսկ միջին դարերում՝ աստվածաշունչ գրերի «գիտամեկնություն» («էկզեգետիկա») դրանց ինքնակայացումը: Եվ սակայն, առավել խորազնին մտաքննությամբ հնարավորություն է ընձեռնվում իմացահայտել, որ երկուստեք՝ և՛ «ավանդական հերմենևտիկայի», և՛ ժամանակակից «փիլիսոփայական հերմենևտիկայի» հայեցակարգերին ներհատուկ է հասկացման ու մեկնության «արվեստ ուսուցանող» և/կամ «գիտություն ուսուցանող» տեսա-գործնական գործառույթներ, այդկերպ՝ ինքնակայանալով որպես բուն «մեկնարվեստ» և-կամ «մեկնագիտություն» («հերմենևտիկա»):

Արդարև, միջնադարյան հայրերի և Ռեֆորմացիայի աստվածաբանական հերմենևտիկան ներկայանում էր ***սրբազան տեքստերի մթին տեղերի հասկացման ու մեկնաբանության*** գիտություն ուսուցանող և/կամ «արվեստ ուսուցանող»[1] և ուրեմն՝ ***մեկնուսույց*** իր հայեցակարգերով ու գործառույթներով: Միջին դարերում աստվածա-բանության համար օժանդակ գիտակարգ հաստատված իր կարգավիճակով հերմենևտիկան առաջնային պլան է մղվում բոլոր այն դեպքերում, երբ կարիք է առաջանում ***սրբազան տեքստերի մթին տեղերի հասկացման ու մեկնաբանության:*** Միջնադարյան քրիստոնեական տեքստամշակութային ավանդությունում հերմենևտիկայի իդեայի ու խնդրակարգի տեսանությունը, սահմանումն ու գործառնությունը այսչափ միայն հասկանալն ու մեկնորոշելը, այն է՝ «սրբազան տեքստերի մթին տեղերի հասկացում ու մեկնաբա-նություն», մասնագիտական գրականության մեջ ամրագրել է տեսակետ, ըստ որի՝ իր կայացման միջնադարյան փուլում, իսկ հետագայում նաև Ռեֆորմացիայի ժամանակաշրջանում, հերմենևտիկան գոյություն է ունեցել և՛ իր իսկությունն ինքնահասկացող ու մեկնորոշող տեսական հայեցակարգեր կայացումով՝ որպես ***աստվածաշնչյան մեկնագիտություն (հերմենևտիկա)***, և՛

[1] **Гадамер Х.-Г.**, Истина и метод, «Прогресс», М., 1988, էջ 226:

բազմայլ իր կիրառական դրսևորումներում՝ որպես ***Սուրբ Գրերի գիտամեկնություն (էկզեգետիկա)***[2]:

2. Միջնադարյան հերմենևտիկան անտիկ հունական հերմենևտիկայի հայեցակարգի ավանդությունից, նրա կոչումից ու իսկությունից լիովին կտրված ու առանձին մի ավանդություն չէ: «Հերմենևտիկան… դեռ նույնիսկ անտիկ շրջանում ներկայացել է որպես «բանավոր խոսքի թարգմանություն», (բանավոր խոսքի և ապա՝ նաև գրավոր ասվածի) «մեկնություն», «անհասկանալին մեկնելու արվեստ» կամ «անհասկանալի իմաստները ուղղաբանորեն կամ այլաբանորեն մեկնելու պրակտիկ մեկնարվեստ»՝ իրագործվելով որպես «քառակի իմաստի մեկնարվեստ», այն է՝ «բառացի, էթիոլոգիական, այլաբանական և անալոգիական իմաստների մեկնարվեստ»: ***Անտիկ շրջանի իր նախապատմությունում հերմենևտիկան սկզբնավորվելով իր կիրառական դրսևորմամբ՝ գոյություն է ունեցել տեսական ու գործնական իր բաղադրատարրերի երկմիասնությամբ, հիմնականում կենսագործվելով որպես հունա-լատինական դասական գրականության պրակտիկ մեկնարվեստ»***[3]: Եվ սակայն, անտիկ հունական հերմենևտիկայի ոչ բոլորատեսակ դրսևորումներն էին էականորեն նշանակալի և այս առումով՝ հենց էացնող ու կենարար միջնադարյան քրիստոնեական հերմենևտիկայի ավանդության՝ իր

---

[2] Միջնադարյան հերմենևտիկայի և էկզեգետիկայի մասին տե՛ս **Августин Блаженный,** Христіанская наука, или Основанія св. Герменевтики и церковнаго красноречія, Кіев, 1835. **Ориген**, О началах, Новосибирск, 1993, էջ 265-328. **Шпет Г.,** Герменевтика и ее проблемы, Контекст, 1989, М., էջ 234-240. **Саврей В. Я.,** Александрийская школа в истории философско-богословской мысли, М., 2010. **Тисельтон Э.,** Герменевтика, Коллоквиум, Черкассы, 2011, էջ 111-136. **Bertrand de Margerie**, Introduction a l' histoire de l' exégèse, Les Édition Du Cerf, Paris v. I-III. **Henri de Lubac**, Medieval Exegesis: The four senses of scripture, by Wm. B. Eerdmans Publishing Co. (Grand Rapids. Michigan) and by T&T Clark Ltd (Edinburg, Scotland), USA, v. 1-3. **The Reception and Interpretation of the Bible in Late Antiquity:** proceedings of the Montreal colloquium in honour of Charles Kennengiesser, 11-13 October 2006, ed. by Lorenzo DiTommaso & Lucian Turcescu, Brill, Leiden Boston, 2008. **Tomas F. Torrance**, Devine meaning: stadies in patristic hermeneutics, T&T Clark Ltd, Edinburg, 1995. և այլն:

[3] **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, էջ 161-162: Հերմենևտիկայի անտիկ շրջանի մասին տե՛ս նաև **Бласс Фр.,** Герменевтика и критика, Одесса, 1891, С. 1-16., **Шпет Г.,** Герменевтика и ее проблемы, Контекст; 1989, М., С. 232-233. **Саврей В. Я.,** Александрийская школа в истории философско-богословской мысли, М., 2010., **Тисельтон Э.,** Герменевтика, Коллоквиум, Черкассы, 2011, С. 69-84 և այլն:

որպիսությամբ կայացման մեջ: Անտիկ շրջանի իր նախապատմության մեջ հերմենևտիկայի դրսևորումների ոչ ամենևին բոլորաքանակությունը (երբեմն եղել են նաև կորուստներ) և, սակայն, ողջ տեսականին նշանակալի կորրեկցիայով ու վերաիմաստավորմամբ է փոխանցվել վաղ միջնադարի քրիստոնեությանը որպես գիտության ու արվեստի ավանդություն՝ մշակութային տեքստ, ժառանգություն և ուսուցակարգ, այդկերպ՝ իրենում պահյալ և նույն իրենով իսկ անթաքույց իմաստությունը փոխանցելով ամենայն ուսումնասերի հասու ընկալությանը, ներկրթությանն ու կենսակերպին ի ներկայություն:

3. Միջնադարյան քրիստոնեական հերմենևտիկայի վերաբերմունքը անտիկ հունական գիտամշակութին ու կոնկրետորեն նաև հերմենևտիկային ***քննական ու ընտրողական*** էր: Եվ հիմնորոշ սկզբունքները, ըստ որոնց և՝ քննարկվում ու ճշտորոշվում էին անտիկ մտածողների հայեցակարգերն ու գաղափարները, բխում էին քրիստոնեական հավատի ու մտքի փոխներգործուն ու փոխճշմարտող համագործակցությամբ հասու աստվածային ճշմարտության ու բուն իմաստության վարդապետությունից: Վերոասացյալը հավաստում է նաև միջնադարագետ ու մեկնագետ Ռ. Ա. Մարկուսի միտքը. «Օգոստինոսի Քրիստոնեական գիտություն աշխատության երկրորդ գլուխը նվիրված է այն սկզբունքների քննարկմանը, որոնց հիմնվելով քրիստոնեությունը կարող է ընդունել և կիրառել դասական անտիկի մշակույթը»[4]: Արդարև, միջնադարյան քրիստոնեական հերմենևտիկան որոշակի բացությամբ ու որոնումով էր քննության առնում անտիկ հերմենևտիկան: Առ ի՞նչ բացություն ու որոնում է ներհատուկ քրիստոնեական խորհրդածությանը: Կարելի է ամրագրել, որ քրիստոնեության առաջացումից ի վեր ամենայն ժամանակներում՝ և՛ դեռ անտիկ շրջանում, և՛ միջին դարերում, և՛ այնուհետ՝ հետագա դարերում, որում ներառյալ՝ ներկայում ու նույնիսկ ապագայում, քրիստոնեական իմաստասիրող հոգու ու մտքի բացությունն ու որոնումն ուղղորդվում է ***ամենայն գոյավորում և/կամ բանավոր ու գրավոր ասվածում աստվածայինի և ուրեմն՝ իսկության բացահայտմանն ու հաղորդմանը, և իսկություն***

[4] **Markus R. A.**, Marius Victorinus and Augustiny – The Cambridge history of later greek and early medieval philosophy, ed. by Armstrong A.H., Cambridge University Press, New York, 2008, p. 347.

բացահայտող այդպիսի միտքն է հենց իմաստություն:

Անտիկ հերմենևտիկան իր գոյության ինչպիսի՞ մոդուսով էր ի ներկայություն մատչում, որպես էականորեն նշանակալի, քրիստոնեական հերմենևտիկայի տեսադաշտ: Անտիկ հունական հերմենևտիկայի՝ որպես գիտություն և/կամ արվեստ մշակութային ավանդության ժառանգությունից միջնադարյան հերմենևտիկան իր կայացման համար որպես հոգեկեցույց ու կենարար, այդկերպ իսկ՝ մշակութորեն կրթական հնարավորություն և այդ ավանդության անթաքչություն ու հնարավոր բացահայտելիություն, կարող էր հաղորդ, ընկալ և հասու լինել անտիկ հերմենևտիկայի իսկության ***եռակի*** մեկնաբանության հնարավորություն[5] պահող ու ներքուստ միասնական՝ հետևյալ դիտավորությանը, կերպարանմանն ու կատարումին, այն է՝ ***բացահայտել խոսքի և-կամ գրության ստույգ իմաստը, որով և հասու ու ընկալ լինել ամենայնի գոյության բուն իսկությունը հայտող իմաստին և ապա՝ վերընթանալ ու վերահասու լինել այդ իմաստում պահյալ իմաստության խորհուրդին:***

4. Քրիստոնեության ուսմունքը սկզբունքորեն ունի պոտենցիա և Եկեղեցու Հայրերի Վարդապետության (պատրիստիկայի) սկզբնավորման ու կայացման շրջանում կենագործվել է՝ մարդկային սեռի ու ազգերի ***ինքնությունում*** (որում իսկ՝ մտքի, հոգու ու մարմնի շարժում) ***ու կենսակերպում՝*** առ Աստված քրիստոնեության հավատի, հույսի ու սիրո և դրանց վրա հիմնացյալ ***իմաստության*** ներթափանց զորությամբ և այդկերպ իսկ՝ ամենայնն իրենում բովանդակող և դրանում առավելացող ներկայավորությամբ: Այս ժամանակաշրջանում ու այնուհետ ողջ միջնադարում իրագործվել են ակներևաբար առավելացող ակտուալությամբ կրոնական տեքստերի նկատմամբ բացության և հենց հերմենևտիկայի կիրառության բազմաքանակ ու բոլորատեսակ դրսևորումներ: Մարդկային ինքնության և կենսակերպի քրիստոնյա հոգևորությամբ ներկրթության ու կայացման խնդիրը հիմնադրել է նաև հերմենևտիկայի սկզբունքային կոչումը և ըստ այդ կոչման՝ նրա «ի՞նչ», «ինչպիսի՞ ինչ», «ինչպե՞ս» և «ինչո՞ւ համար»

---

[5]Հերմենևտիկայի անտիկ հունական ավանդության իսկության **եռակի** մեկնաբանության հնարավորությունները տե՛ս **Քոչարյան Ռ.**, «Իսկության հերմենևտիկայի» կայացման նախադրյալները անտիկ շրջանի հերմենեվտիկայի դիցապատում և ռացիոնալ նախապատմությունում // Փիլիսոփայությունը արդի աշխարհում, գիրք VII, գիտաժողովի նյութեր, Եր., 2017, էջ 30:

գոյությունը: Մարդկային սեռի ու ազգերի դեպի քրիստոնեական ինքնություն ու կենսակերպ ներկրթության նպատակային խնդիրը բացահայտում է հերմենևտիկայի կոչումն ու կոչմանը համապա-տասխան իր լինելության իսկությունը, այն է՝ հնարավորել ու իրագործել

ա) կրոնական տեքստերի նկատմամբ մարդկային ինքնության ադեկվատ բացության ներկրթություն,

բ) հասկացման ու մեկնության կենագործման ու կատարելա-գործման, որով և՝ տեքստով ասման բերվող ճշմարտության (տեսական իմաստության) և ամենայն բարյաց ու առաքինության (գործնական իմաստության) իմաստընկալության, անհրաժեշտ ու նախընտրելի պայմանների բացորոշում ու կայացում:

5. Միջնադարյան քրիստոնեական վարդապետության մեջ հերմենևտիկայի գոյությունը ևս հարկ է ուսումնասիրել և՛ ըստ իր սկզբունքային կոչման ու ըստ այդմ՝ ***անհրաժեշտ ու նախընտրելի գոյության պոտենցիայի,*** և՛ ըստ իր կոնկրետորեն ***ակտուալացած գոյության***, և՛ քննության առնելով նաև այն հարցի տեսանկյունից, թե՝ ***որքանո՞վ է հերմենևտիկայի այդկերպ ակտուալացած գոյությունը համապատասխան իր պոտենցիային:*** Հերմենևտիկան կարելի է ու նաև հարկ է քննության առնել մեկ այլ բնույթի հարցադրության իմաստային տեսադաշտում ևս: Այն հարկ է ուսումնասիրել ըստ իր սկզբունքային ***դիտավորության, ըստ այդմ՝ նաև իր կերպարանումի ու կատարումի*** և թե որքանով է իր ***իդեայի,*** այսու և՝ իդեային համապատասխան իր լինելության ***կոչումի*** սկզբունքային դիտավորությունը կերպագործվել ու կատարումի հասել կոնկրետորեն ակտուալացած իր գոյությունում: Հերմենևտիկայի որպես այդպիսին գոյության իսկությունը բացա-հայտելով, հնարավոր է նաև կողմնորոշվել այն հարցում, թե հերմենևտիկայի՝ տվյալ դեպքում կոնկրետորեն ակտուալացած գոյությունը, արդյո՞ք, իր իսկությունն իրենում ունեցող գոյություն և ուրեմն՝ ***իսկական գոյություն*** է, թե՞ իր իսկությունից օտարացյալ և ուրեմն՝ իր իսկությունն իրենում չունեցող ***անիսկական գոյություն:*** Ըստ իս, միջնադարյան քրիստոնեական հերմենևտիկան ունի իր ուսումնա-սիրության ենթակա տիրույթի և կատարումի սկզբունքորեն ընդարձակ պոտենցիա և դրա հետ մեկտեղ՝ ոչ միշտ այդ պոտենցիային համաչափ իրագործում:

6. Մեզ հասած տեղեկությունների, աշխատությունների և երբեմն դրանց ֆրագմենտների համաձայն, հերմենևտիկան անտիկ շրջանում և

այնուհետև քրիստոնեական միջնադարում գոյություն է ունեցել ոչ միայն զուտ ***գործնական***, պրակտիկ իր արտահայտություններով, կոնկրետ մեկնությունների տեսքով, այլև իրագործվել են ***տեսական*** մշակումներ, գրվել նաև տեսական աշխատություններ[6]: Ի՞նչ էական եզրակացության կարելի է հանգել, խորհրդածելով միջնադարի քրիստոնեական հերմենևտիկայի այսկերպ եղելումը: Տեսական և գործնական միասնության թեկուզ և ոչ բոլոր ու համատարած և նույնիսկ ոչ հաճախ իր մասնավոր դրսևորումներով կայացածության ճշմարիտ իրողությունը նկատի ունենալով հանդերձ, արդարև, հարկի է ասել, որ ***միջնադարյան սուրբ հայրերի քրիստոնեական հերմենևտիկան,*** այնուամենայնիվ, ***եղելականացած իր հնարավորությունների մեջ, և ուրեմն՝ նաև <u>սկզբունքորեն</u>, ունեցել է տեսականի ու գործնականի երկմիասնական գոյություն:*** Եվ կարելի է ճշտիմաց հաստատագրել, որ միջնադարում այն կայացել է որպես Սուրբ Գրերի ոչ լոկ գործնական գիտահասկացում ու գիտամեկնություն (էկզեգետիկա), այլև հաս-կացման ու մեկնության տեսություն կամ հայեցակարգ՝ մեկնարվեստ կամ մեկնագիտություն (հերմենևտիկա): Հերմենևտիկան «միջնադարում և ապա՝ նաև Ռեֆորմացիայի շրջանում… կայացել է որպես Սուրբ Գրերի մեկնարվեստ կամ մեկնագիտություն, իր այդ բնույթով հենց անվանակոչվելով «Սրբազան Հերմենևտիկա»»[7]: Միջնադարյան գրամշակույթում ու հենց գիտամշակույթում քրիստոնյա սուրբ հայրերի հերմենևտիկան իր տեսա-գործնական գործառնության երկմիասնությամբ ներկայանում է որպես հերմենևտիկայի ու էկզեգետիկայի համագոյություն[8]:

7. Միջնադարյան քրիստոնեական մշակութային ավանդության մեջ հերմենևտիկան գոյություն ունի եռակերպ ներկայությամբ: Առաջին, կան աշխատություններ, որոնցում հերմենևտիկան ներկա է որպես հասկացման ու մեկնության ***ոչ միշտ բանորոշ տես(ան)ություն,*** որի

---

[6] **Августин Блаженный**, Христіанская наука, или Основанія. св. Герменевтики и церковнаго красноречія, Кіев, 1835. **Ориген**, О началах, Новосибирск, 1993.

[7] **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, էջ 162, տե՛ս նաև էջ 171:

[8] **Քոչարյան Ռ.**, Ս. Օգոստինոսի քրիստոնեական վարդապետությունում Սուրբ Գրոց հասկացումն ու մեկնությունը՝ շնորհ թե՞ գիտություն. (էկզեգետիկայի և հերմենևտիկայի համագոյությունը) // «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», գիտաժողովի նյութեր, գիրք VIII, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, «Լիմուշ», Եր., 2018, էջ 152-169:

դեպքում հոգևոր տեսողությամբ՝ անմիջապես իրագործվում է իսկության ու իմաստության խորհուրդի բացահայտում ու պատմում՝ զուտ կոնկրետ մեկնություն, և չկա ռացիոնալ-լեզվական բանաձևմամբ հասկացման ու մեկնության բուն իսկության, ըստ որի և՝ կիրառության սկզբունքների ու կանոնակարգության բացորոշում: Երկրորդ, կան նաև աշխատություններ, որոնցում հերմենևտիկան ներկա է որպես ***բանորոշ հայեցակարգ,*** Եվ երրորդ, կան նաև երկեր, որոնցում հերմենևտիկան ներկա է որպես ***կոնկրետ մեկնություն՝*** ըստ մեկնության բանորոշ տեսության կամ հայեցակարգի: Միջնադարյան քրիստոնեական գրամշակույթում որոշակիորեն հենց գիտամշակույթում կան առավելաչափ հազվագյուտ է մեկնագետ հեղինակների այնտեսակ ավանդը, որում համատեղ ներկա են և՛ երկրորդը՝ մեկնագիտության (հերմենևտիկայի) բանորոշ հայեցակարգը ու երրորդը՝ ըստ մեկնագիտության բանորոշ հայեցակարգի՝ ամենայն աստվածաշունչ գրոց կոնկրետ գիտամեկնությունը՝ էկզեգետիկական բնույթի աշխատությունները: Եվ հերմենևտիկայի ու էկզեգետիկայի համաներկայություն հազվագյուտ օրինակ են հանդիսանում Որոգինեսի ու ս. Օգոստինոսի՝ սերունդներին փոխանցված գրամշակութային բովանդակ ստեղծագործական ավանդում ներկա գիտամշակութային ժառանգությունը: Ամենայն ընթերցողաց ու նաև մեկնագետ ուսումնասիրողներին է հայտիմաց և մասնագիտական գրականությունում բազմիցս ամրագրված, որ սերունդներին փոխանցված ու մեզ հասած՝ ս. Օգոստինոսի գրական հարուստ ու բազմաբովանդակ ժառանգությունում առկա են մեկնողական բազմատեսակ ժանրի, այդ թվում նաև մեկնագիտության ու որպես այդպիսին՝ Սուրբ Գրոց գիտամեկնության տեսության դասական աշխատություններ[9]:

8. Միջնադարյան մեկնագիտության և աստ՝ կոնկրետորեն ս. Օգոստինոսի «Սրբազան Մեկնագիտության» հայեցակարգի իսկության հասկացման ու մեկնորոշման ամբողջական խնդրակարգի քննախոհությունն առաջիկայում՝ ս. Դավիթ Անհաղթից ուսյալ համախոհությամբ իրագործվում է քառակի հարցադրությամբ ա) ***«գոյություն ունի,***

---

[9] **Bright P.**, Augustine and the Ethics of Reading the Bible. The Reception and Interpretation of the Bible in Late Antiquity: proceedings of the Montreal colloquium in honour of Charles Kennengiesser, 11-13 October 2006, ed. by Lorenzo DiTommaso & Lucian Turcescu, Brill, Leiden Boston, 2008, էջ 59. տե՛ս նաև **De Doctrina Christiana:** A Classic of Western Culture, ed. D.W.H. Arnold and P. Bright, Notre Dame, in University of Notre Dame Press, 1995:

արդյո՞ք, մեկնագիտությունը»[10]*, բ)* ***«ի՞նչ է»*** *և* ***գ) «ինչպիսի՞ ինչ է մեկնագիտությունը»,*** *կամ որ նույնն է՝* ***«որպես ի՞նչ գոյություն ունի մեկնագիտությունը», դ) «ինչի՞ համար է մեկնագիտությունը»:*** Իսկ բացահայտել Օգոստինոսի «Սուրբ Գրոց մեկնագիտության» կամ «Սրբազան մեկնագիտության» որպես այդպիսին գոյության իսկությունը, կնշանակի՝ հայտնացույց անել ու մեկնորոշել մեկնագիտության ուսումնասիրության ***առարկան*** և ***կատարումը***: Իր «Քրիստոնեական գիտություն» երկի առաջին և երկրորդ գլուխներում բացահայտելով ***մեկնագիտության առարկան***, հաջորդ՝ երրորդ և չորրորդ գլուխներում Օգոստինոսը բացորոշում է նաև ***մեկնագիտության կատարումը***: Այլ հրապարակման մեջ տողերիս հեղինակի կողմից արդեն ամրագրվել է, որ նրա այդ «աշխատությունում առաջադրվել է «Սուրբ Գրոց մեկնագիտության» ***խնդրակարգը,*** հատկորոշվել մեկնագիտության ուսումնասիրության ***առարկան՝*** իրենում եռատեսակ ներբաժանմամբ, և ապա՝ սկզբունքային լուծումներով ներկայացվել նաև մեկնագիտության ***կատարումը***, ինչը հնարավորություն է ընձեռում նրա քրիստոնեական իմաստության վարդապետությունում ստույգ հաստատագրել «Սրբազան Մեկնա-գիտության» («Սրբազան Հերմենևտիկայի») մշակված հայեցակարգ»[11]:

Հայազգի Անհաղթ Իմաստասերի՝ գրեթե ամենայն իրողությունների առանչությամբ քառաստիճան ներկարգավորությամբ ամբողջական հարցադրության[12] վերոնշյալ երկրորդ ու երրորդ հարցերի առաջադրումն ու քննա-խորհրդածությունը, անդ՝ «իմաստասիրության», իսկ աստ՝ «մեկնագիտության» առնչությամբ որոշակիացնող կիրառությամբ՝ «ի՞նչ է և «ինչպիսի՞ ինչ է մեկնագիտությունը», իրենում առաջնահերթ այն մասով, թե՝ ո՞րն է Օգոստինոսի «Սուրբ Գրոց

---

[10] Օգոստինոսի մեկնագիտական հայեցակարգի առնչությամբ առաջին հարցի ու պատասխանի քննա-խորհրդածությունն ու մեկնորոշումը տե՛ս **Քոչարյան Ռ.**, Ս. Օգոստինոսի քրիստոնեական վարդապետությունում Սուրբ Գրոց հասկացումն ու մեկնությունը՝ շնորհ թե՞ գիտություն. (էկզեգետիկայի և հերմենևտիկայի համագոյությունը) // «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», գիտաժողովի նյութեր, գիրք VIII, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, «Լիմուշ», Եր., 2018, էջ 152-169:

[11] Տե՛ս նույն տեղը, էջ 35:

[12] **Դաւիթ Անյաղթ** Սահմանք իմաստասիրութեան: Երկասիրութիւնք փիլիսոփայականք, աշխ. Ս. Արևշատյանի, **,** Եր., 1980, էջ 29:

Մեկնագիտության» ուսումնասիրության առարկան և դրա եռատեսակ հատկորոշման մեջ հենց առաջնային ու գերագույն առարկան, ներկայացվել է նրա մեկնագիտական հայեցակարգի իսկության բացորոշմանը նվիրված իմ երկրորդ աշխատությունում[13]: Եվ աստ՝ նույն այդ թեմային նվիրված իմ երրորդ աշխատությունում քննախոհության ենթակա են Դավիթ Անհաղթի՝ հին հույն իմաստասերներից ուսյալ, գրեթե ամենայն իրողությունների առնչությամբ ընդունված՝ վերոնշյալ չորս հարցադրությամբ քննա-խորհրդածության վերստին երկրորդ ու երրորդ հարցերը՝ իրենցում օգոստինոսյան «Սուրբ Գրոց Մեկնագիտության» ուսումնասիրության բովանդակ առարկան առհայտող և այն եռատեսակ հատկորոշող արդեն նաև այն մասով, թե՝ որո՞նք են նրա մեկնագիտության ուսումնասիրության երկրորդ և երրորդ ***առարկաները***:

9. Նախորդ հրապարակման մեջ ներկայացվեց ու մեկնորոշվեց, որ Սուրբ Գրոց մեկնագիտության ուսումնասիրության ենթակա բովանդակ առարկան երեք սեռի տարաբաժանելով, ըստ Օգոստինոսի, առաջնայինն ու գերագույնը, որով և հարկ է հաճույք ապրել կամ սքանչանալ՝ Աստված է[14]: Ըստ նրա, մյուս առարկայով հարկ է միայն ***օգտվել*** և ուրեմն՝ դրանք հարկ է որպես պիտանի տեսանել ու օգտագործել, իսկ այլ ևս առարկայով հարկ է ***և՛ հաճույք ապրել, և՛ օգտվել***[15]: Նկատելի է և աստ՝ դեռ միայն կանխասացությամբ ակնարկման ենթակա, որ հաճուք ապրելը կամ սքանչանալը Օգոստինոսը նշում է նաև առաջնային ու միմիայն սքանչության առարկայի և երկրորդային ու միմիայն օգտության առարկայի միջև, կարծես, միջանկյալ երրորդ առարկայի՝ երկուստեք և՛ հաճույքի, և՛ օգտության ենթակա ***մարդկանց*** առնչությամբ, թեև որպես հենց միջանկյալ՝ ավելի ճշգրիտ կլիներ մեկնագիտության բովանդակ առարկայի եռատեսակ այս բաժանման մեջ այն դիտարկել որպես երկրորդը:

---

[13] **Քոչարյան Ռ.,** Ս. Օգոստինոսի «Սրբազան Մեկնագիտության» ուսումնասիրության առաջնային ու գերագույն առարկան (Աստվածաշնչում Հակոբի ու Մանվեի հարցին հրեշտակի պատասխանի իմաստության խորհուրդի քննա-համեմատական մեկնորոշմամբ) // Էջմիածին N 10 , էջ., 2018, էջ 23-48:

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 37, 38. տե՛ս և թարգմանյալ բնագրում՝ **Августин Блаженный**, Христіанская наука, или Основанія. св. Герменевтики и церковнаго красноречія, Кіев, 1835, էջ 17.

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

Ահավասիկ, համայն գոյում հաճույք ապրելու կամ սքանչության առարկաների գոյության առանձնահատկությունից տարբերվող գոյությամբ ներկա են այլ ևս առարկաներ, ըստ Օգոստինոսի՝ մնացյալ առարկաների մեկ այլ սեռ, որոնցով հարկ է միայն ***օգտվել որպես միջոցներ***, որ և օգնում են մեզ հասնել առաջիններով սքանչացման[16]: Երկրորդ սեռի առարկաները համայն, այսինքն՝ բոլորաքանակ ու ամենատեսակ, գոյից միայն նրանք են, որոնց գոյությունը ***օգտակար ու պիտանի է*** առաջինների սքանչության հասանության համար: Սքանչության (կամ երանության) ու օգտության ենթակա իրերի վերաբերյալ իր միտքն ի մի բերելու ու նաև պարզաբանելու և, տարբերակմամբ հանդերձ, էականորեն նշանակալի ակնարկով հայտնացույց անելու համար, նա գրում է. «Նրանք, որոնցով հարկ է սքանչանալ, դարձնում են մեզ երանելի, իսկ մյուսները, որոնցով հարկ է օգտվել՝ օգնում են մեզ հասնել երանության, այսինքն՝ օգնակից են լինում մեզ՝ հասանել այնպիսի իրերի, որոնք մեզ դարձնում են երանելի և սերտագույն միասնանալ նրանց հետ»[17]:

Եվ անշուշտ, կարող է լինել և, ավա՛ղ, այս կյանքում բազմիցս տեղի է ունենում նաև հակառակը: Ըստ ս. Օգոստինոսի, մարդիկ, որ սքանչացողներն ու օգտվողներն են, կարծես, վերոնշյալ երկու առարկաների միջև տեղակայված լինելով, դժվարացնում են իրենց առ Աստված երթը, եթե սկսում են սքանչանալ (հաճույք ապրել) այնտեսակ առարկաներից, որոնցով հարկ է միայն օգտվել: Իսկ երբեմն գայթելով՝ մարդիկ նաև լիովին շեղվում են իրենց ուղուց, այնպես որ ունենալն այն, ինչով հարկ է սքանչանալ, նրանց համար դանդաղում է կամ լիովին հեռանում ու դառնում անմատչելի, ոչ վերին ու հոգևոր, այլ՝ ստորին՝ զգայական ու զգացական առարկաների նկատմամբ մեր սիրո և ուրեմն՝ ստորնասեր մեր կենցաղի պատճառով: «Օգոստինոսը երջանկությունը կապում է Աստծո նկատմամբ սիրո և աստվածագիտության հետ: Ապերջանիկ հոգին այն է, որ կապանքված է վաղանցուկ առարկաների նկատմամբ սիրով, և այդ ապերջանկությունը, դժբախտությունը պոտենցիալ կա դեռ մինչ զրկանքները, կորուստներն ու հոգու հետագա պատառոտվելը: Ապերջանիկ դժբախտ

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 33:
[17] Տե՛ս նույն տեղը, էջ 17:

մարդը, ըստ օգոստինոսի, համայնագետ և, սակայն, Աստծուն անգետն է, և երանյալ է նա, ով գիտի Աստծուն, եթե անգամ չգիտի ոչ այլ ինչ»[18]:

Օգոստինոսը մեկնորոշում է. «Հաճույք ապրել կամ սքանչանալ, կնշանակի ոչ այլ ինչ, քան ուժգին սիրել որևէ առարկա՝ հենց հանուն նրա, իսկ օգտվել առարկայով, կնշանակի՝ օգտագործել այն միջոց՝ հասանելու նրան, ինչը սիրելի է, եթե իրոք այն արժանի է սիրո, քանզի անթույլատրելի ու անօրեն օգտագործելը՝ կնշանակի չարաշահել, այլ ոչ՝ օգտագործել»[19]: Սուրբ ու իմաստուն հայրն իր միտքն ակնհայտող օրինակ է բերում յուրաքանչյուրի նույնորոշումը պանդուխտին՝ իր կենաց կենսազորությունում ու կենսակարգում ոչ-ուրևէ ու ոչ-երբևէ, այլ՝ միմիայն հայրենիքում բարերջանիկ՝ իրեն միայն ներհայտ ներանձնականի (ներաշխարհի) և դրացիներին ու ամենքին առհայտ իր կենսակերպի բարեզորությամբ ու բարեկարգությամբ: Իսկ թե նա կամենար ավարտել օտարությունում իր թշվառ, փորձանքով ու վտանգով լի իր պանդխտությունը և վճռեր վերադառնալ հայրենիք, նրան պետք և օգտակար միջոց կլինեին կառքեր և-կամ նավեր, որոնցով և հարկ է իրեն օգտվել և կնշանակի՝ ի օգտության են հայրենաժաման հանգրվանության, որում և՝ երջանիկ կյանքի հաճույքով լիացման: Եվ եթե նա լինի ճանապարհի հաճույքներով և հենց կառքի կամ նավի շարժով գրավչացյալ ու լիահաճոյ, փոխանակ որ հարկի էր միմիայն օգտվել, և այլևս չմտածի շուտափույթ ավարտել իր ճամփորդությունը՝ ինքնատուր խաբուսիկ հաճույքների, կօտարվի իր հայրենիքից, որի հաճելիքները միայն կարող էին պատճառել իսկական երանություն: «Նույնորեն և մենք, որ Տիրոջից հեռու՝ պանդուխտ ենք այս մահկանացու կյանքում, - գրում է Օգոստինոսը, - եթե կամենում ենք վերադառնալ հայրենիք, որտեղ կարող ենք լինել երանացյալ, պետք է օգտվենք այս աշխարհից, այլ ոչ՝ հաճույք ապրել (և/կամ սքանչանալ՝ Ռ. Ք.), որպեսզի ***անտեսանելի Աստված տեսանելի լինի մեզ արարված իրերի միջով, այսինքն՝ որպեսզի տեսանելի ու զգայելի իրերի միջոցով հասնենք հավիտենականի ու հոգևորի ճանաչողության*** (ընդգծումը՝ Ռ. Ք.)»[20]: Հարկ է, այսպիսով, հասկանալ ու ամրագրել, որ համայն մարդկային իրողություններից այս սեռի առարկաների հետ բոլորադեպ

---

[18] **Гагарин А. С.,** «Homo interior» Августина Аврелия (Блаженного) // Дискурс Пи, Выпуск 6, 2006, ИФиП УрО РАН, С. 64.

[19] Տե՛ս նույն տեղը, էջ 17-18:

[20] Տե՛ս նույն տեղը, էջ 18-19:

առնչություններում ճշմարիտ որևիցե սքանչություն հնարավոր ու ի դեպ է միմիայն դրանցում աստվածային(ի) ներկայության նկատմամբ:

10. Աստ՝ անհրաժեշտ է նաև հարցադրել ու մեկնորոշել, թե՝ ի՞նչ սկզբունքով Օգոստինոսն իրականացրեց մեկնագիտության բովանդակ առարկայի ներբաժանումը: Նշելով առարկաների փոխտարբերակվող երեք սեռ, ըստ այդ առարկաների բնության, նա տարբերակեց մարդու ***բացությունն ու վերաբերմունքը*** այդ առարկաների նկատմամբ: Ընդ որում, նա բացառեց մարդու անձնահաճ ինքնակամությունը և ըստ այդմ՝ կամայականությունն ու քմահաճությունը, քանզի մարդու բացությունն ու վերաբերմունքը նա սահմանեց ու որոշարկեց՝ ըստ այն հիմնային ու սկզբնային առնչվածության, որ ունեն այդ առարկաները մարդու հետ իրենց համագոյությունում: Օգոստինոսը մեկնագիտության բովանդակ առարկայի ներբաժանումն իրագործեց՝ որոշարկելով մարդու բացությունն ու վերաբերմունքը՝ ըստ այդ առարկաների ***ներկայակցության*** ու դրա ***նշանակալիության*** մարդու նկատմամբ, Աստծով՝ միմիայն հաճույքը կամ սքանչացումը, մարդկանցով՝ և՛ հաճույքը, և՛ օգտվելը, իսկ աշխարհին համապատկան ու հենց ժամանակընթաց այլ առարկաներով՝ միմիայն օգտվելը: Ամենայն այդ առարկաները, ըստ իրենց բնության փոխտարբերակվող առանձնահատկության, մարդու հետ իրենց համագոյությունում ներհայտում են իրենց ներկայակցության և ուրեմն՝ նաև դրա նշանակալիության նույնորեն փոխտարբերակվող որպիսությունը: Աստված հոգևոր էություն է, և Նրա բնությունն ու ըստ այդմ՝ գոյությունը հոգևոր ու հավերժական է: Աշխարհի բնությունը նյութական ու ապականացու է և ըստ այդմ՝ գոյության մոդուսը ժանակավոր ու վաղանցուկ է: Իսկ մարդու բնությունը հոգե-մարմնավոր է և ըստ այդմ՝ գոյության մոդուսն այս աշխարհում ու այս կյանքում ժամանակընթաց ու հենց ժամանակավոր և, սակայն, իր անձի՝ հոգուն ենթակարգված մարմնի հետ միավորությամբ, առ Աստված ու հենց աստվածանմանություն ներկատարելագործմամբ ու իր հոգևորության ժամանակահաղթ բնությամբ ու այս աշխարհում կենագործմամբ՝ ունի հնարավորություն և ուղի՝ հասանելու հավերժական կյանքի:

11. Իսկ ինչպե՞ս է մեկնորոշում իր միտքը Օգոստինոսը՝ որպես վերոնշյալ երկուսից զատորոշվող առարկա, որոնցով հարկ է և՛ սքանչանալ, և՛ օգտվել, նշելով մարդկանց: «Նաև մենք՝ մարդիկ, որ սքանչանում ու օգտվում ենք առարկաներով, ինքներս յուրովի ևս

առարկաներ ենք: Ավելին, մարդը՝ ստեղծված Աստծո պատկերով և նմանությամբ, արդարև մեծ ու կարևոր մի բան է, ոչ այն առումով, որ ունի մահկանացու մարմին, այլ՝ որ իր բանական հոգով գերազանցում է բոլոր մյուս կենդանիներին»[21]: Օգոստինոսը հարցնում է. «Մարդիկ, արդյոք, պետք է սքանչանա՞ն իրենցով, թե՞ միայն օգտվեն, թե՞ միասին և՛ սքանչանան, և՛ օգտվեն»[22]: Արդարև, մեզ պատվիրված է սիրել միմյանց, «սիրել փոխադարձ մեկը մյուսին»: Եվ հետևողական հարցը հետևյալն է. «Արդյո՞ք, պետք է մենք սիրենք մարդուն ինքն իր համար, թե՞ որևիցե այլ ինչի համար: Եթե իր իսկ համար, ապա՝ մենք սքանչանում ենք իրենով, այսինքն՝ իրենում ենք տեսանում մեր երանությունը, իսկ եթե այլ որևէ ինչի, ապա՝ օգտվում ենք»[23]: Օգոստինոսի պատասխանն այս հարցին հետևյալն է. «Ինձ թվում է, թե անհարկի է (պետք չէ) սիրել մարդուն ինքն իր համար, քանզի ինչը սիրում ենք հենց իր համար, նրանում ենք տեսնում մեր երանությունը, որով և մխիթարվում ենք այս կյանքում, եթե ոչ իսկությամբ, ապա՝ գոնե հույսով, սակայն «անիծյալ է նա, ով իր հույսը մարդու վրա է դրել» (Երեմիա 17, 5)»[24]:

Ըստ նրա տեսակետի, անհարկի է որևէ ոք սքանչանա ոչ միայն ***այլ*** մարդկանցով, այլև սկզբունքորեն մարդով՝ որպես այդպիսին ու հանուն մարդու, որ և կնշանակի, թե՝ անհարկի է սքանչանա նաև ինքն իրենով՝ իր իսկ համար:

«Ոչ ոք է պարտ սքանչանա ինքն իրենով՝ իր իսկ համար, այլ՝ միայն հանուն Նրա, Որով և հարկ է սքանչանալ: Միայն այնժամ է մարդն իսկորեն մեծ ու գերազանց, երբ իր բովանդակ կյանքով ձգտում է Աստծո անանց ու անփոփոխ կյանքին և բովանդակ սրտով միանում նրան: Իսկ եթե, ընդհակառակը, մարդը սիրում է իրեն՝ իր իսկ համար, ապա՝ ձգտում է ոչ Աստծուն, այլ՝ ինքն իրեն դիմելով՝ ակնհայտորեն դիմում է փոփոխվող, ոչ-հաստատուն առարկայի: Ուստի և՝ այդ դեպքում սքանչանում է իրենով որոշ անբավարարության զգացումով, քանզի մարդը կատարյալ է լինում լոկ այնժամ, երբ լիովին միանում է անփոփոխ բարուն, այլ ոչ այնժամ, երբ Նրանից շրջադարձ է կատարում ինքն իրեն: Այսպիսով, եթե հարկ է, որ դու սիրես և ինքդ քեզ՝ ոչ հանուն

[21] Տե՛ս նույն տեղը, էջ 33-34:
[22] Տե՛ս նույն տեղը, էջ 34:
[23] Տե՛ս նույն տեղը:
[24] Տե՛ս նույն տեղը:

քեզ, այլ՝ հանուն Աստծո, Ով ճշմարիտ առարկան է քո սիրո, ապա՝ թող չզայրանա քո վրա մերձավորը քո, երբ դու սիրում ես նաև նրան՝ հանուն Աստծո: Քանզի ահավասիկ սիրո պատվիրանը՝ ի վերուստ տրված. «սիրիր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ, իսկ Տեր Աստծուն՝ բովանդակ սրտով, բովանդակ հոգով, բովանդակ մտքով և բովանդակ զորությամբ» (Մատթ., 22, 37, Ղևտ., 19, 18), այսինքն՝ քո բոլոր մտքերը, ողջ կյանքը, բանահաստողության քո ողջ կարողությունը նվիրաբերիր Նրան, Ով շնորհել է քեզ այդ բոլորը: «Բովանդակ սրտով, բովանդակ հոգով, բովանդակ մտքով» բառերը ամենայն իրենցով ընդգրկում են մեր բովանդակ անձը, այնպես որ այլ որևիցե իրով սքանչանալու տեղ չի մնում մեզանում: Ուստի ով ըստ հարկի սիրում է իր մերձավորին, պետք է ջանա, որ և այդ մերձավորը սիրի Տեր Աստծուն բովանդակ սրտով, բովանդակ հոգով, բովանդակ մտքով: Քանզի մերձավորին, ինչպես ինքն իրեն, իսկությամբ սիրողը, բովանդակ սերը՝ և՛ իր, և՛ նրա, կայացնում է Տիրոջ նկատմամբ այն սիրո մեջ, որը չի սիրում իրենից հեղանել իր ջրերը նվազեցնող հոսանքներ»[25]:

12. Արդարև, մարդը կարող է նաև անձնահաճ ինքնակամությամբ անբարի տեսակետ կազմել, բանախոսել ու գործել: Ըստ հարկի՞ է և պատշա՞ճ է, ուրեմն, սքանչանալ սկզբունքորեն որևիցե մարդով և-կամ ինքն իրենով՝ իր իսկ համար և լոկ հանուն մարդու, հանուն իր՝ այդ իսկ ինքնության, այն է՝ կյանքում այլևայլ կերպ կայացյալ մտքի, հոգու ու մարմնի, որպես անձ, ***միության,*** երբ այդ միությունը, որ շնորհ է ու հարկ է, որ լինի ըստ այդ շնորհի կոչման ու իսկության կատարում, հաճախ ոչ թե ըստ իր կոչումի ու իսկության է, այլ՝ շնորհով ընձեռնված սոսկ պոտենցիա, հնարավորություն և ոչ՝ կյանքում ճշմարիտ կատարում, սոսկ անվամբ է միություն և ոչ՝ ներքին ու արտաքին բովանդակությամբ, որ և կնշանակի՝ իր անիսկական, այլ ոչ՝ իսկական գոյությամբ է միություն, և կնշանակի, որ հաճախ մարդկային մտքի կայացող կյանքի և հոգու բնության ճշմարիտ կարիքի միջև առկա է հակառակություն, ուստի և՝ մտքի, հոգու ու մարմնի ախտերով ներքուստ խարխլված, մսխված, այլևս դատարկ ու ավերակ դարձած և լոկ արտաքուստ թվացյալ, այլ ոչ իսկությամբ կայացած միություն է: Սքանչության արժանի՞ է, արդյոք, մարդկային անձի՝ մտքի, հոգու և մարմնի միությունը՝ իր իսկ համար, երբ այն հաճախ սոսկ արտաքին

[25] Տե՛ս նույն տեղը, էջ 35-36:

ու թվացյալ է, ներքուստ ***առնչված չէ Աստծուն, աղբյուրացյալ, լցյալ ու բովանդակյալ Նրանով*** և ուրեմն՝ չունի իրենում ***բարի ու կենարար, հոգի ապրեցնող, առ Աստված և առ սրբություն, իմաստություն ու կատարելություն*** վեհացնող ներքին միասնություն ու խաղաղություն: Սքանչության արժանի՞ է, արդյոք, մարդկային անձի նաև սրտի խորհրդի, մտքի, խոսքի ու գործի, և-կամ՝ դիտավորության, կերպարանումի ու կատարումի միությունը, երբ այն հաճախ նույնաբար արտաքուստ ու թվացյալ՝ չունի իրենում Աստծուն առնչված ու նաև այդ ամենը, ըստ հարկի սահմանյալ մարդկային գոյության հոգե-մարմնավոր միության, ներքուստ փոխհամապատասխանության մեջ կարգող հիմնորոշ ներքին միասնություն ու խաղաղություն: Հնարավո՞ր է, արդյոք, որպես իսկությամբ կենարար պատշաճ ու հարկի, սքանչանալ մարդկային անձով՝ հանուն նրա անբարի ակտուալացած ինքնության ու կյանքի, սքանչանալ հին աշխարհի, միջին դարերի, Նոր Ժամանակի, Նորագույն ու ժամանակակից շրջանի բռնակալներով, այլոց ու նաև նրանց ունեցվածքի, ստեղծագործության ու բովանդակ պատկանելության նկատմամբ իշխանության ու ավարառության ձգտող ներոններով և-կամ այլ որևէ մեկով ու սկզբունքորեն մարդով, կնշանակի նաև ինքն իրենով՝ իր իսկ անաստված, անսուրբ, անիմաստուն, անբարի ու ոչնչարար ձգտումի, հոժարակամության, ընտրության, սրտի խորհուրդի, մտքի, խոսքի ու գործի համար:

«Ինչ վերաբերում է մեզ՝ սքանչացողներիս և օգտվողներիս, զետեղված, կարծես, մեկ և մյուս առարկաների մեջտեղում, դժվարեցնում ենք մեր ընթացքը, եթե սկսում ենք սքանչանալ այդ ամենից նրանցով, որոնցով հարկ է միայն օգտվել, իսկ երբեմն՝ այդկերպ լիովին գայթում ու շրջվում ենք մեր ուղուց, այնպես որ ունենալն այն առարկաները, որոնցով հարկ է սքանչանալ, դանդաղում է և-կամ իսպառ հեռանում է մեզանից՝ այլ ու հենց ստորին առարկաների նկատմամբ մեր սիրո պատճառով»[26]: «… Եվ մենք, որ ճամփորդում ենք Տիրոջից հեռու այս անցավոր կյանքում, եթե կամենում ենք վերադառնալ հայրենիք, որտեղ կարող ենք լինել երանելի, պետք է այս աշխարհով (կամ այս աշխարհից) օգտվենք, այլ՝ ոչ սքանչանանք, որպեսզի ***անտեսանելի Աստված տեսանելի լինի մեզ***

[26] Տե՛ս նույն տեղը, էջ 17:

արարված իրերի միջով, որպեսզի տեսանելի ու զգայելի իրերի միջոցով ճանաչենք հավետն ու հոգևորը (հասու ու իմաց լինենք հավետին ու հոգևորին, ընդգծումն ու հավելումը՝ Ռ. Ք.)»[27]:

Այստեղ ևս հարկ է հասկանալ ու ամրագրել, որ համայն մարդկային իրողություններից նաև մարդկային սեռի, որում և՝ անձանց բովանդակ ինքնության, կենսակերպի ու մշակույթի հետ բոլորադեպ առնչություններում ճշմարիտ սքանչության որևիցե իրադարձություն հնարավոր, ի դեպ ու ըստ հարկի՝ իսկություն է միմիայն այդ ամենում ***աստվածային(ի)*** ներկայության նկատմամբ:

Մեր քննա-խորհրդածությունն ուղղորդող հերթական հարցն, այսպիսով, հետևյալն է. բարի՞ են միայն ինքնին ու ըստ ինքյան , արդյոք, իրենց որպես այդպիսին գոյությամբ այն բոլորը, որոնցից մարդկային կարողությանը հնարավոր է որևէ կերպ օգտակարություն քաղելը: Անշուշտ ոչ: Ըստ ավետարանական և հենց տերունական խոսքի, նաև ըստ աստվածաշնչյան վեցօրյա պատումի մեջ Սուրբ Հոգով ներկայացյալ ու հայտնյալ աստվածային խոսքի ու իմաստության և ըստ սուրբ հայրերի մեկնության, բարի է միայն Աստված և Նրա կողմից արարյալ ամենայն ինչ: Սուրբ նահատակները, չսիրելով մեղավորի մեղավորությունն ու մեղքը և սիրելով ամենքի մեջ՝ բուն մարդուն ու հենց աստվածայինը նրանցում, օգտակարություն էին քաղում նույնիսկ իրենց չարչարողների չարչարելու գործից և ուրեմն՝ մեղավորների նաև մեղքից՝ հանուն Աստծո, առ Աստված աճելու և իրենցում Աստված ունենալու համար[28], արդարև, հասնելով Հիսուս Քրիստոսին չարչարակից լինելու և հանուն Քրիստոսի՝ նահատակության ու մարտիրոսության շնորհի սուրբ պատվին ու պսակին:

Արդարև, բարի է մարդկային անձի կողմից սիրո արժանի առարկային՝ ամենայն մերձավորին, որոնցում և՝ մերձավորագույն Աստծուն, համայն մարդկությանն ու հրեշտակներին և նրանցում աստվածայինին առինքնությունը, նպատակային ուղին ու անելիքը: Իսկ աստվածային պատվիրանների չկատարումը և ուրեմն՝ չարությունն ու մեղքն անբարի է՝ Աստծուց չէ և աստվածային՝ առ Ինքն կոչող կամոք ու պատվիրանոք չէ մուտք գործել ի մարդ և ի աշխարհ: Եվ այնուամենայնիվ, մարդկային ինքնության ներանձնական ու միջանձնային

---

[27] Տե՛ս նույն տեղը, էջ 18-19:

[28] Տե՛ս նույն տեղը, էջ 36-37:

կյանքում ու մշակույթում՝ ***առ Աստված*** և-կամ ***առ աստվածայինն*** առինքնող կեցողության նպատակում ու անելիքում՝ չարությունից ու մեղքից տարբերակվող այդ հիմքով, կենտրոնաձիգ առանցքով ու աննահանջ նշանակետով բարի է՝ հնարավոր, անհրաժեշտ ու հենց պետք, օգտակարություն քաղել ***այս աշխարհից*** ու ***այս կյանքից՝*** առ Աստված սիրո ճշմարիտ ու բարեկատար նվիրվածությամբ ու հավատարմությամբ ուղիղ, ճշմարիտ ու բարի կեցողության և Նրա հետ առհավետ միության հասնելու համար:

Ի մի բերելով վերոասացյալը՝ կարելի է ամրագրել, որ Օգոստինոսն իր մեկնագիտական հայեցակարգում որպես ուսումնասիրության ենթակա երկրորդ դասի առարկա նշելով մարդկանց, որոնցով հարկ է սքանչանալ (հաճույք ապրել) ու օգտվել, նկատի ունի սքանչանալ ոչ նրա որպիսությամբ ինքնին, այլ միմիայն մարդկային ինքնությունում ներկայող աստվածայինով և ուրեմն՝ սքանչանալ նրանով՝ հանուն Աստծո: Եվ սուրբ ու իմաստուն հայրը մեկնագիտության ուսումնասիրության ենթակա երրորդ դասի առարկա նշելով նյութեղեն այս աշխարհը, որով հարկ է միայն օգտվել, նկատի ունի դրանց բնության առանձնահատկություններից օգտությունն որպես միայն միջոց՝ ենթակարգված մարդու՝ առ Աստված կեցողության և Նրա հետ առհավետ միությամբ սքանչության բուն նպատակին: Ահավասիկ, ս. Օգոստինոսը «Սրբազան մեկնագիտության (հերմենևտիկայի)» ուսումնասիրության բովանդակ առարկայական տիրույթում որպես առաջնային ու գերագույն առարկա իմացահայտելով Աստծուն, արդեն երկրորդ և երրորդ տարասեռ առարկաների՝ մարդկանց ու աշխարհի, նկատմամբ մարդկային բացությունն ու դրանց նշանակալիությունը որոշարկում է երկուստեք՝ և՛ հաճույք ապրելը, և՛ օգտվելը առնչելով ոչ ամենևին մարդկանց և-կամ աշխարհի ինքնին որպիսությանը, այլ միմիայն մարդու՝ առ Աստված ու ամենայնում ևս՝ առ աստվածայինը տեսագործնական կեցողության և Նրանով սքանչացող միությամբ երանելի ու իսկորեն երանության գերնպատակին:

Արդ՝ միջնադարյան «Սրբազան մեկնագիտության (հերմենևտիկայի)» որպիսության առնչությամբ՝ այն սկզբունքորեն ու որակապես բնորոշող ու սահմանող եզրակացության ինչպիսի՞ հնարավորություն է ընձեռնում ս. Օգոստինոսի մեկնագիտության հայեցակարգի առարկայական տիրույթի առանձնահատկությունների հայտորոշումը:

Մեկ այլ աշխատությունում արդեն հնարավորություն էր ընձեռնվել ինձ՝ միջնադարյան մեկնագիտության քննա-հասկացմամբ և էական հատկությունների հայտորոշմամբ՝ առաջարկել այն սահմանող մի քանի բանաձև՝ առանձնաբար ըստ առարկայի և ապա միասնաբար՝ ըստ առարկայի և մերձավոր ու նաև հեռավոր կատարումի:

«Սահմանում՝ ըստ առարկայի.

«Սրբազան հերմենևտիկան» աստվածաշնչյան, եկեղեցական և մշակութային գրավոր ու բանավոր ավանդության հասկացման ու մեկնության տեսություն ու պրակտիկա է:

Սահմանում՝ ըստ առարկայի ու մերձավոր կատարումի.

«Սրբազան հերմենևտիկան» մեկնարվեստի տեսություն կամ մեկնագիտություն է՝ աստվածաշնչյան, եկեղեցական և մշակութային գրավոր ու բանավոր ավանդությունում ամենայն գոյի՝ աստվածային ու մարդկային իրողությունների, որպես այդպիսին գոյության իսկություն հայտող իմաստ, որում և՝ իմաստության խորհուրդ, բացահայտող՝ ըստ մարդկային կարողության:

Սահմանում՝ ըստ առարկայի ու հեռավոր կատարումի.

«Սրբազան հերմենևտիկան» մեկնարվեստի տեսություն կամ մեկնագիտություն է՝ աստվածաշնչյան, Եկեղեցական և մշակութային գրավոր ու բանավոր ավանդությունում մարդկային ինքնությունն ու կյանքը աստվածանմանության կոչող ու կատարելագործող իմաստ, որում և՝ իմաստության խորհուրդ, բացահայտող՝ ըստ մարդկային կարողության»»[29]:

Սույն գիտական հոդվածում ներկայացվող՝ ս. Օգոստինոսի մեկնագիտության ուսումնասիրության առարկայի հատկորոշումը հնարավորում է վերոասացյալը միաբերելով՝ ձևակերպել «Սրբազան հերմենևտիկայի»՝ ըստ առարկայի ու կատարումի սահմանող բանաձևն առավել մանրամասնորեն: Սուրբ և իմաստուն հայրը որպես մեկնագիտության ուսումնասիրության բովանդակ առարկա է սահմանում ու մեկնորոշում միայն սքանչարար Աստծուն, մարդու գոյությունը՝ սքանչելի ու օգտակար հանուն Աստծո և այս աշխարհը՝ միայն օգտակար ու հենց միջոց մարդու՝ առ Աստված ու առ աստվածայինը ներկատարելագործվող կեցողության վերընթացությանը: Ըստ այդմ՝

---

[29]**Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, էջ 172, 173:

կարելի ամրագրել «Սրբազան մեկնագիտությունը (հերմենևտիկան)»՝ ըստ իր ուսումնասիրության առարկայի ու կատարումի սահմանող մտքի բանաձև:

Սահմանում՝ ըստ առարկայի ու կատարումի.

«Սրբազան մեկնագիտությունը (հերմենևտիկան)» աստվածաշնչյան, եկեղեցական և մշակութային գրավոր ու բանավոր ավանդությունում Աստծո ու աստվածայինի՝ համաշխարհում ու կոնկրետորեն նաև այս աշխարհում՝ մարդկային ինքնությունում, կյանքում ու մշակույթում առ-Ինքնող ու ներկատարելագործող ներկայության խորիմաստության քննա-հասկացման ու մեկնորոշման տեսություն ու պրակտիկա է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն գիտական հոդվածում ներկայացվում է ս. Օգոստինոսի «Սրբազան հերմենևտիկայի» ուսումնասիրության բովանդակ առարկայի երկրորդ և երրորդ դասի առարկաների հատկորոշումը: Սուրբ ու իմաստուն հայրը «Սուրբ Գրոց հերմենևտիկայի» իր հայեցակարգում եռադաս ներբաժանելի առարկա է սահմանում ու մեկնորոշում միայն սքանչարար Աստծուն, մարդու գոյությունը՝ սքանչելի ու օգտակար հանուն Աստծո և այս աշխարհը՝ միայն օգտակար ու հենց միջոց մարդու՝ առ Աստված ու առ աստվածայինը ներկատարելագործվող կեցողության վերընթացությանը:

Բանալի բառեր. «Սրբազան հերմենևտիկա», հասկացում, մեկնություն, ուսումնասիրության առարկա, Աստված, մարդ, աշխարհ, սքանչանալ, օգտվել:

ВТОРОРОДНЫЙ И ТРЕТЬЕРОДНЫЙ ПРЕДМЕТЫ В ЦЕЛОСТНОМ ПРЕДМЕТЕ ИССЛЕДОВАНИЯ В КОНЦЕПЦИИ «СВЯЩЕННОЙ ГЕРМЕНЕВТИКИ» СВ. АВГУСТИНА

Ромик Кочарян

Кандидат философских наук, доцент,

Старший научный сотрудник

Научно-исследовательского института древних рукописей

«Матенадаран» им. М. Маштоца

РЕЗЮМЕ

Св. Августин в своей концепции «Священной Герменевтики» разделяет предмет исследования на три рода. В научной статье представлены существенные свойства вторых и третьих родов предмета «Герменевтики Священного Писания». Мудрый святой отец определяет и

интерпретирует как предмет “Герменевтики Святого Писания”: единственно дивотворящего Бога, кем должно наслаждаться, бытие человека, коим должно наслаждаться и пользоваться во имя Бога, и мир, чем должно пользоваться как средством для достижения того, чем должно наслаждаться, т. е. как польза и средство совершенствующего восхождения бытия человека к Богу и к божественному.

Ключевые слова: “Священная Герменевтика”, понимание, истолкование, предмет исследования, Бог, человек, мир, наслаждаться, пользоваться.

SECOND AND THIRD OBJECT’S SPECIES IN THE WHOLE SUBJECT OF RESEARCH IN ST. AUGUSTINE’S CONCEPTION OF “SACRED HERMENEUTICS”

Romik Kocharyan

PhD in Philosophy, Associate professor,

Senior Researcher of the «Matenadaran» M. Mashtots

Research Institute of Ancient Manuscripts

SUMMARY

St. Augustine in his concept of “Sacred Hermeneutics” divides the subject of research into three genera. The scientific article presents the essential properties of the second and third genera of the subject “Hermeneutics of the Holy Scriptures”. The wise holy father defines and interprets as the subject of the “Hermeneutics of Holy Scripture”: the only marvelous God, Who should be enjoyed; the being of a human, whom he should enjoy and use for God’s sake; and the world, which should be used as a means to achieve what he should enjoy, that is, as a benefit and means of a perfect ascent of man’s being to God and to the divine.

Keywords: “Sacred hermeneutics” (“Hermeneutica sacra”), understanding, interpretation, object, God, human, world, to enjoy, to use.